«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ*

Դաստիարակ՝ Անուշ Ղևոնդյան

Մանկապարտեզ՝ «Թումանյան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

Գլուխ 1 Հայրենասիրությանը որպես բարոյական դաստիարակության անձնային կարևորագույն հատկություն ---------- 5

Գլուխ 2 Հետազոտության ընթացքը ---------- 9

Պարապմունքի պլան ---------- 12

Եզրակացություն ---------- 17

Գրականության ցանկ ---------- 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միտված են մեկ բառի մեջ՝ «Հայրենիք»»:

Ցիցերոն

Հետազոտության արդիականությունը: Սոցիալական զարգացման անհրաժեշտությունն առավել կարևորվում է հասարակության զարգացման կտրուկ փոփոխությունների և վերակառուցման ժամանակահատվածում: Այսօր, մեր նորացող հասարակությունն իր զարգացման ժողովրդավարական միտումներով բոլորովին այլ պատվեր է իջեցնում կրթական համակարգին, շեշտակի կարևորելով ինքնուրույն, իր որոշումներում ազատ, նախաձեռնող և ստեղծագործական մտքի տեր անձնավորության, պատասխանատու, հայրենասեր և արժանապատիվ քաղաքացու ձևավորման անհրաժեշտությունը: Հասարակության վաղվա օրը կախված է լինելու ոչ այնքան յուրաքանչյուր մարդու ինտելեկտուալ կարողություններից, որքան մարդկաց՝ միմյանց լսելու, համագործակցելու և հօգուտ ընդհանուրի գործելու ցանկությունից և ունակություններից[1]:

Հետազոտության նպատակն է մշակել և տեսականորեն հիմնավորել նախակրթարանում սաների հայրենճանաչողության ձևավորման գործընթացի կարևորությունը:

Հետազոտության խնդիրներն են

- բացահայտել հայրենասիրությանը որպես բարոյական դաստիարակության անձնային կարևորագույն հատկություն

[1] Նախադպրոցական մանկավարժություն, Հաստատված է ՀՀ կրթության գիտության նախարարության կողմից, Էջ91

- մշակել հայրենասիրական դաստիարակության, հայրենաճանաչողական կրթության կազմակերպումը սահուն իրականացնելու համար ժամանակակից լուծումներ՝ կիրառելով ավանդական և ժամանակակից մեթոդներ
- իրականացնել մասնագիտական փորձարարական աշխատանք նախակրթարանի սաների հետ՝ բացահայտելու համար սաների հայրենաճանաչողության գիտելիքների մակարդակը, ներգրավվածությունը ու ազդեցությունը հայրենասիրական դաստիարակության գործընթացում:

Սաների մոտ հայրենաճանաչողության մշակույթի հիմքերի ձևավորման խնդիրները հաջողությամբ լուծելու համար կարևորում ենք հետևյալ ոլորտները.

- առարկայական զարգացնող միջավայրի ստեղծում,
- երեխաների և դաստիարակի համատեղ գործունեություն,
- երեխաների ինքնուրույն գործունեություն:

Հետազոտական աշխատանքը ներառում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություն և գրականության ցանկ:

Հետազոտական աշխատանքի հիմքում դրված է նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումները, պետական կրթական նոր չափորոշիչներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 1 ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է, որը կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին:

Բարոյական դաստիարակության ընթացքում ձևավորվում են անձնային կարևորագույն հատկություններ՝

- բարություն,
- մարդասիրություն,
- աշխատասիրություն,
- ընկերասիրությունը,
- հայրենասիրություն,
- մաքրասիրություն:

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է՝ հայրենիքը սիրող:Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է[2]:

Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության:

Դաստիարակության առաջին հայեցակարգը, որը մշակել էր Ն.Կ.Կրուպսկայան, (1920թ.) ուղղված էր կոմունիստական գաղափարներով օժտված, ներդաշնակ զարգացած

[2] Յու Ամիրջանյան, Ա Սահակյան, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, երևան 2005թ, էջ348

անձնավորության ձևավորմանը և առաջարկում էր հիմնախնդիրը լուծել կոլեկտիվ դաստիարակության միջոցով: Քննադատելով երեխայի մասին գիտության՝ պեդոլոգիայի անհատական դաստիարակության և ուսուցման սկզբունքները, Ն.Կ.Կրուպսկայան և Ա.Ս.Մակարենկոն հռչակում են կոլեկտիվ դաստիարակության գերակայություն և առանձնահատուկ կարևորում հայրենասիրական և ինտերնացիոնալիստական դաստիարակության խնդիրները: Դաստիարակության առաջին հայեցակարգն հստակեցվում և աշխատում էր պետական ծրագրային փաստաթղթերի միջոցով[3]:

1959 թ., մանկամսուրների և մանկապարտեզների միավորման մասին պետական որոշմամբ հաստատվում է հասարակական դաստիարակության գերակայություն, ընդլայնվում և հզորանում է մսուր-մանկապարտեզների ցանցը, մշակվում է մեկ ընդհանուր հայեցակարգ, որը նպատակաուղղվում է սովետական ժողովրդի կայացման գործընթացին և կարևորում հասարակական դաստիարակության ընթացքում ձևավորվող միասնության՝ բռունցքի գաղափարը: Նշված հայեցակարգերը չէին հակասում միմյանց, բոլորն էլ ուղղված էին համակողմանի և ներդաշնակ զարգացած անձնավորության (դաստիարակության իդեալական նպատակը) կայացմանը, հարուստ գիտելիքներով զինված, կարգապահ, հանրային մտածելակերպ ունեցող և կոմունիստական գաղափարախոսությանը նվիրված անձնավորության (դաստիարակության իրական նպատակը) ձևավորմանը:

20-րդ դարի 50-60-ական թվականներին մեր կողմից ուսումնասիրվող խնդրին անդրադարձել են Յու. Բաբանսկին, Բ. Լիխաչևը, Վ. Ստոլետովը, Յու. Ամիրջանյանը, Ա. Սահակյանը, Վ. Սուխոմլինսկին, Ս. Խաչատրյանը, Ս. Պետրոսյանը, Գ. Շչուկինան, Ս. Մանուկյանը, Ս. Գևորգյանը, Հ. Անդրեասյանը, Ռ. Համբարձումյանը, Վ. Աթոյանը, Ս. Զաքարյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ: Հայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործընթացը տարբեր ժամանակներում կազմակերպման համար տրվել են այդ ժամանակաշրջանին համապատասխան գաղափարներ և լուծումներ:

[3] Նախադպրոցական մանկավարժություն, Հաստատված է ՀՀ կրթության գիտության նախարարության կողմից,էջ 53

Դեռևս մեր թվարկությունից առաջ առաջադեմ մտածողներ Արիստոտելը, Սոկրատը, Պլատոնն և ուրիշներ, չափազանց կարևորել են հասարակության և մասնավորապես երեխաների հայրենասիրական դաստիարակության իրականացումը: Հայ իրականության մեջ այս գործընթացում իրենց ավանդն են ներդրել, Դ. Ալիշանը, Խս. Աբովյանը, Գ. Նժդեհը և ուրիշներ, մանկավարժական գիտությունների թեկնածուներ՝ Վ. Մուրադյան, Ա Մանուկյան, Դ Փիլավջյան, Ա.Ա Շարոնով, Ե.Վ Շիրենկինայ, Վ.Ս. Դարբունով, Կ. Ա. Յակուպովի, Ս. Վ. Մատվեևայի, Ե. Ն. Ռիմպանովայի, Ա.Ն. Բելոնոգավայի, Տ.Վ. ԵՒիկինայ և այլն, անդրադարձել են երեխաների հայրենասիրական դաստիարակության գործընթացի կազմակերպման մեթոդամանկավարժական պայմաններին և առանձնահատկություններին[4:]

Հավաքելով և մշակելով ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը, Հ.Թումանյանը մշակել է երեխաների համար հայրենագիտական խաղեր և վերլուծել դրանց մանկավարժական արժեքը երեխայի միտքը և բարոյականությունը զարգացնելու գործընթացում: Հ.Թումանյանի կողմից մշակած խաղերի մեծ մասը տարբերակված ձևով առ այսօր օգտագործվում է նախադպրոցական դիդակտիկայում: Դրանցից են. «Գույների խաղը», «Աստղերի խաղը», «Տառերի խաղը», «Հայկական առածների լոտո» և այլ օրինակներ[5]:

Ցանկացած մարդու համար իր հայրենքիքը սկսում է իր տնից, բակից, իր երկրի մի թիզ հողից, մայրենի լեզվից և այլն:

Փոքրիկ հայրենասերների դաստիարակությունն էլ սկսվում է նրան ամենամոտ օբյեկտներից՝ տնից, որտեղ ապրում է և մանկապարտեզից, որտեղ հաճախում է: Ընտանիքում նա սիրում է մորը, հորը, եղբորը, քրոջը, տատիկին ու պապիկին: Ընտանիքից հետո հաջորդ օբյեկտը մանկապարտեզն է՝ երեխաներ, դաստիարակ, դայակ, մանկավարժական այլ աշխատողներ: Ծնողը և դաստիարակը պարտավոր են

---

[4] https://www.bok.am/sites/default/files/2022-10/%D4%B3.%D4%B7%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BD%D5%A5%D5%B2%D5%B4%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%2005.10.2022%20%281%29.pdf.

[5] Նախադպրոցական մանկավարժություն, Հաստատված է ՀՀ կրթության գիտության նախարարության կողմից, էջ 122

ձևավորել հայրենասիրական դաստիարակություն երեխաների մեջ: Նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենի պատմության, մշակույթի, հայրենի ժողովրդի, ազգային ավանդույթների և սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից՝ դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պտրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ:

Երեխաների հայրենասիրական դաստիարակության համար մեծ դեր է խաղում մեր մեծ հայրենասերների, ֆիդայիների, Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի ապրած կյանքն ու գործունեությունը, հերոսների կերպարները, զորավարների հավերժող օրինակները:

Սաների հայրենաճանաչողության դաստիարակման, հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում մեծ դեր են խաղում Հայաստանի պետական խորհրդանիշները՝ գերբ, դրոշ, օրհներգ, զինանշան, դրանց պատմության ուսումնասիրությունը, հայրենիքի մասին պատմությունները, ստեղծագործությունները, զրույցները և այլն:

Արդեն նախադպրոցական տարիքում երեխան պետք է իմանա, թե որ երկրում է ապրում, ինչով է այն տարբերվում այլ երկրներից: Պետք է երեխաներին հնարավորինս շատ պատմել այն քաղաքի մասին, որտեղ նրանք ապրում են. հպարտության զգացում սերմանել իր քաղաքի նկատմամբ: Երեխաներին սովորեցնել հոգ տանել այն ամենի մասին, ինչ ստեղծել են տատիկներն ու պապիկները, մայրերը և հայրերը: Պահպանե՛լ մաքրությունն ու կարգուկանոնը հասարակական վայրերում, մասնակցե՛լ իրենց բակում, փողոցում, այգիներում, մանկապարտեզում գեղեցկություն և կարգուկանոն ստեղծելուն:

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հայրենաճանաչողության ձևավորումը ՆՈՒՀ-ում իրականացվում են հետևյալ ուղղություններով.

1. Մեթոդական աջակցություն

2. Աշխատանք երեխաների հետ

3. Ծնողների հետ աշխատանք

4. Աշխատանք հասարակության հետ:

Ուղղություններից յուրաքանչյուրը փոխկապակցված են և ներառում են.

1. Ծանոթություն հայկական բանակի ստեղծմանը, զորքերի տեսակներին . զինվորականի մասնագիտությանը

3. Ծանոթություն հերոսների և նրանց սխրագործությունների հետ.

5. Ծանոթություն երկրների պետական խորհրդանիշներին:

Սաների մոտ հայրենաճանաչողության ձևավորման նպատակով իրականացրել ենք պարապմունք նախակրթարանի 5-6 տարեկան երեխաների հետ: Աշխատանքը ներառում է հետևյալ ձևերը, որոնք թույլ են տալիս երեխաներին զարգացնել բարոյական և հայրենասիրական զգացմունքներ.

- Դաստիարակի պատմությունը թեմայի շուրջ.
- Հանդիպում պատերազմի մասնակից ծնողների հետ.
- Հայրենիքի պաշտպանների մասին կարդալ պատմություններ.
- Հարց ու պատասխան սաների հետ.
- Հայրենիքի մասին բանաստեղծությունների և ասացվածքների սովորեցում.
- Հայկանան օրհներգի ունկընդրում, սովորեցնել երգեր Հայրենիքի մասին:

Սաների հայրենաճանաչողության ձևավորման վերաբերյալ, հետազոտական աշխատանք իրականացնելիս, հաշվի ենք առել երեխաների հոգեբանական և տաիքային առանձնահատկությունները՝ կարճաժամկետ ուշադրություն, հետաքրքրություն ամեն ինչի նկատմամբ. վառ, բարձր հուզական ներգրավվածություն: Մեթոդաբանական մշակումների մեծ մասը, որոնք կիրառվել են՝ հիմնված են հենց սրանց վրա:

Ուսումնական պարապմունքի ընթացքում սաներին պատմել ենք մեր անցյալի կարևորագույն իրադարձությունների մասին, թե ինչ սխրագործություններ են կատարել իրենց պապերն ու նախապապերը հանուն հայրենիքի պահպանման, որքան անձնուրաց են պաշտպանել իրենց հայրենի հողը մարտերում, այն սաների մոտ հպարտության զգացում արթնացրեց, որ իրենք նույնպես նման հրաշալի ժողովրդի մի մասն են կազմում, և որ իրենց ընտանիքներն անմիջականորեն ներգրավված են երկրի պատմության մեջ:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների իմացական ոլորտի զարգացման և կրթական վերջնարդյունքներն են՝

ա երեխան վերլուծում է երևույթների պատճառահետևանքային կապերը, ներկայացնում է իր պատկերացումներն ու վերաբերմունքը,

բ. նկարագրում և մեկնաբանում է շրջապատող միջավայրում ընթացող երևույթները, սեփական որոշումներն ու գործողությունները,

գ. առաջադրանքներ կատարելիս դրսևորում է ճանաչողական հետաքրքրություն և ստեղծագործականություն,

դ. մոդելավորում է առարկաները, հեքիաթի հերոսներին, բնության երևույթները պայմանական նշաններով, առանձին պատկերներով, տարբերում է ճանապարհային երթևեկության պարզ նշանները,

ե. ունի պատկերացումներ տնտեսական պարզ հասկացությունների, ազգային և այլ ազգերի մշակութային առանձնահատկությունների, հայրենի երկրի մասին.

զ. դրսևորում է քննադատական վերաբերմունք ներկայացվող նյութի նկատմամբ, կողմնորոշվելով տեղեկատվության բազմազանության մեջ, կատարում է գրագետ ընտրություն, կատարում է հետևություններ և այդ առնչությամբ արտահայտում իր կարծիքը,

է. դրսևորում է մեդիա և թվային գրագիտություն, նշում է իրական և մեդիա միջավայրերի տարբերությունները՝ մեդիայից ստացված տեղեկատվությունը համադրելով իրական կյանքին,

ը. հասկանում է մեդիա գործիքների կիրառության բազմազանությունը, մեծահասակի աջակցությամբ հստակ նպատակով կարողանում է կիրառել դրանք կրթական և խաղային միջավայրում[6]:

Սովորողների հայրենասիրական դաստիարակության գործընթացն ավելի արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև ուսումական գործընթացում ներգրավված մասնակիցների պատկերացումները հարստացնելու և միասնական պահանջներ ապահովելու նպատակով՝ մշակվել է ժամանակակից հայրենասերի մոդելը:

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Թեմա – «Հայկական բանակ»

Նպատակ - Հստակեցնել և ամրապնդել երեխաների գիտելիքները հայոց բանակի վերաբերյալ: Ծանոթացնել պետական դրոշին, զինանշանին, օրհներգին: Արթուն պահել հայրենասիրական ոգին: Զարգացնել խոսքը ճիշտ կառուցելու հմտություններ:

Ընդլայնել հայրենիքի պաշտպանների, հայկական բանակի, նրա հերոսական արարքների վերաբերյալ երեխաների պատկերացումները, դաստիարակել երախտագիտության զգացում: Խրախուսել հետաքրքրությունը:

Խնդիրները.

1. Երեխաների մոտ ձևավորել հետաքրքրություն հայոց բանակի մասին սովորելու նկատմամբ.

1. զարգացնել հարգանք հայրենիքի նկատմամբ.
2. ձևավորել զինվորի, բանակի մասին խոսելու ունակություն:

Վերջնարդյունքներ՝

- ճանաչողական և մոտիվացիոն կարողունակության ձևավորում
- լեզվական և հաղորդակցական կարողունակության ձևավորում
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության ձևավորում
- Իմացական ոլորտի ձևավորում
- Բառապաշարի հարստացում (սխրանք, ծառայել սպայական կազմում, զինվորական տեխնիկա, համազգեստ բառերով ու բառակապակցություններով:

Պարապմունքի ընթացք

Դաստիարակը նախապես ներկայացնում է հրավիրված ծնողին, բացատրում, թե ինչու է նա զիվորական համազգեստով: Այնուհետև հյուրընկալված ծնողը, որը 44-օրյա պատերազմի մասնակից է և սպա, ընթերցում է Ս. Մուրադյանի «Սահմանապահ մեծ եղբայրս» ստեղծագործությունը: (երեխաներն ուշադրությամբ լսում են):

Դաստիարակ- երեխաներ լսեցիք պատմությունը այժմ եկեք գուշակենք հանելուկը

Չի վախենում ոչ մի բանից,

Չի վախենում թշնամուց,

Մեր պապերի հողի համար,

Կյանքը անգամ չի խնայի:

Ճիշտ է, երեխաներ, հանելուկի պատասխանը զինվորն է:

Երեխա - Շուտ մեծանամ,

Զինվոր դառնամ,

Լավ ծառայեմ,

Հայրենիքս ես պաշտպանեմ:

Դաստիարակը ներկայացնում է, որ կա շատ կարևոր մասնագիտության՝ հայրենիքի պաշտպանի մասնագիտությունը: Վաչեի հայրիկը նույնպես ունի այդ մասնագիտությունը: Նա սպա է: Խնդրենք նրան, որ պատմի մեզ՝ որտեղ է սովորել, ի՞նչ ճանապարհ է անցել մինչ սպա դառնալը:

Ծնող – երեխաներ, ես մանկուց երազում էի զինվոր դառնալ: Շատ էի սիրում իմ հայրենիքը և ուզում էի միշտ լինել իմ հայրենիքի կողքին, հարկ եղած դեպքում պաշտպանել հայրենիքս: Երբ ավարտեցի դպրոցս, որոշեցի սովորել Վ, Սարգսյանի անվան Ռազմական ակադեմիայում: Այն գտնվում է Երևանում:

Դաստիարակ – Երեխաներ երևանը հայաստանի մայրաքաղաքն է, Հայաստանի կարևոր պետական կազմակերպությունները գտնվում են Երևանում:

Ծնող – Այդ ակադեմիայի սաները դառնում են հայկական հզոր բանակի սպաներ և գեներալներ: Նրանք խաղաղ պայմաններում բանակում ծառայող հայրենասեր տղաներին սովորեցնում են կրակել, հսկել, պաշտպանել հայրենիքի սահմանները, կիրառել տանկեր, զինվորական տեխնիկա: Պատերազմի ժամանակ որպես հրամանատարներ առաջնորդում են զինվորներին, որպեսզի մարտնչեն թշնամու դեմ:

Նրանք բոլորը ծառայում են մեր հայրենիքին, պաշտպանում մեր երկրի սահմանները, պաշտպանում են ձեզ, ապահովում ձեր հանգիստ քունը:

Բոլոր տղաները, երբ մեծանում են անպայման պետք է ծառայեն բանակում: Բանակում ծառայելը դժվար, բայց միևնույն ժամանակ պատվաբեր և պատասխանտու գործ է:

Հնչում է Հայաստանի հիմնը:

Ակադեմիայի ուսանողները և զինվորները ամեն առավոտ երգում են օրհներգը, և շարունակում իրենց աշխատանքները:

Դաստիարակ – երեխաներ կարող եք ասել ինչպե՞ս ենք տարբերում զինվորներին:

Երեխաներ – համազգեստով:

Դաստիարակ – Ճիշտ է, ապրեք: Իսկ ինչու պետք է ծառայել բանակում:

Երեխաներ – Որ կարողանանք պաշտպանել մեր ծնողներին, տունը, հայրենիքը:

Դաստիարակ – Ո՞վ կարող է ասել, ինչո՞վ են զբաղվում զինվորները բանակում:

Պաշտպանում են մեր երկրի սահմանները, կրակել են սովորում, մարզվում են:

Ֆիզկուլտդադար: երեխաները զինվորների նման խրոխտ քայլքով տեղում կանգնած քայլում են:

Սովորում են «Զինվորիկն եմ ես փոքրիկ հայոց բանակի» երգը:

ՀԱՅ
ՋԻՆՎՈՐ


ՀԱՅ
ՋԻՆՎՈՐ

Ամփոփում

Պարապմունքի վերջում, որպես ամփոփում երեխաներին տրվեցին հետևյալ հարցերը և երեխաների կողմից ստացանք տարբեր պատասխաններ

1. Ի՞նչ եք հասկանում հայրենիք ասելով:

   Երեխա – Հայրենիք ասելով հասկանում եմ իմ տունը. Ծնողներս. ընկերներս

2. Ի՞նչ է հայրենասիրությունը:

   - Երբ մաքուր ես պահում քո շրջապատը. Սիրում ես մարդկանց

3. Հայրենասեր համարո՞ւմ եք ձեզ:

   Բոլորը միաձայն պատասխանեցին այո:

4. Որո՞նք են ձեր հայրենիքը նկարագրող բաղադրիչները:
5. Ձեր կարծիքով ո՞վ է իրական հայրենասերը:

Նախակրթարանի մեթոդիստի դիտարկումները

1. Դաստիարակի խոսքը գրագետ էր, պարզ ու հասկանալի երեխաների համար:

2.Թեման համապատասխանում էր պարապմունքի նպատակին:

3.Ցանկալի է պարապմունքներն անցկացնել ավելի հագեցած դիդակտիկ նյութերով :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայրենասիրությունը հայրենիքի հանդեպ սիրո զգացում է: Հոգևոր, ստեղծագործ հայրենասիրությունը պետք է սերմանել վաղ մանկությունից: Բայց ինչպես ցանկացած այլ զգացում, հայրենասիրությունը ձեռք է բերվում ինքնուրույն և ապրում է անհատապես: Տանը, մանկապարտեզում, այնուհետև դպրոցում և համալսարանում համակարգված նպատակաուղղված աշխատանքի միջոցով է հնարավոր ձևավորել ճիշտ, հարգալից քաղաքացիական վերաբերմունք հայրենիքի նկատմամբ, հանդուրժողականություն միմյանց նկատմամբ, սեր և հարգանք ծնողների նկատմամբ:

2. Հայրենաճանաչողությունն սկսվում է վաղ տարիքից: Յուրաքանչյուր մարդ պետք է իմանա, թե ով է նա և որտեղից է գալիս: Արմատների հիշողությունը, սերը դեպի ժողովուրդը, հայրենի հողը մարդուն դարձնում են ավելի արժանավոր ու ուժեղ: Որպեսզի մեր երեխաները մեծանան հաջողակ, ակտիվ, ինքնավստահ մարդիկ, անհրաժեշտ է նրանց մեջ փոքր տարիքից սերմանել իր երկրին ու իր ժողովրդին պատկանելու զգացումը:

3. Որքան ավելի վաղ աշխատանք տարվի նախադպրոցականների շրջանում հայրենասիրական դաստիարակության ձևավորման ուղղությամբ, այնքան ավելի ուժեղ և կայուն կձևավորվեն նրանց բարոյական որակները, կայուն վարքագիծը, դրական վերաբերմունքը ուրիշների նկատմամբ, կարեկցանքը մեկ այլ անձի նկատմամբ: Միայն այդ դեպքում նրանք կմեծանան որպես իրենց հայրենիքի իսկական հայրենասերներ, ովքեր ունակ կլինեն սխրագործությունների:

4.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու Ամիրջանյան, Ա Սահակյան, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, երևան 2005թ,
2. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Ս. Մարության, Հ. Մինասյան, Գ. Մարտիրոսյան, և ուրիշներ, Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանի) կրթության համալիր ծրագիր, Երևան. 2011թ,
3. Նախադպրոցական մանկավարժություն, Հաստատված է ՀՀ կրթության գիտության նախարարության կողմից
4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575
5. https://www.bok.am/sites/default/files/2022-10/%D4%B3.%D4%B7%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BD%D5%A5%D5%B2%D5%B4%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%2005.10.2022%20%281%29.pdf.